ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ԼԵՆԻՆՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԱՎՈՐՈՒՄ

ՄԵՀԵՆԴԱԿ ՄԵԼԻՔՅԱՆ

Այս օրերին ամբողջ առաջադեմ մարդկությունը նշում է պատմության մեջ իր նախօրինակը չունեցած բազմաթիվ ազգերի ու ազգությունների համերաշխ ընտանիքի, նրանց առաջին ազատ ու կամավոր միավորման՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման վաթսունամյակը։ Հանրագումարի բերելով այդ վաթսուն տարիների ընթացքում ՍՍՀՄ կազմում միավորված ժողովուրդների սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային, գաղափարական ու բարոյական վիթխարի հասումները և դրանք համադրելով ժողովուրդների հարաբերությունների պատմական հաղարամյակների ընթացքի հետ, կարելի է վստահությամբ ասել, որ ՍՍՀՄ-ը ոչ միայն մարմնավորում է մարդկության զարգացման ամենաառաջադիմական միտումները, այլև շրջադարձային նշանաձող է նրա ավելի ու ավելի մարդկայնացման բազմադարյան պայքարում։ Միաժամանակ, պատմական թատերաբեմում ՍՍՀՄ-ի հանդես գալը պայմանավորված էր կոնկրետ-պատմական հանգամանքներով և իրողություններով, կոնկրետ երկրների ժողովրդական զանգվածների ու նրանց առաջնորդող անհատների անմիջական գործողություններով, գիտական խիզախումներով ու նպատակադիր պայքարով։

Արտադրության միջոցների մասնավոր սեփականության ու սոցիալական հակամարտությունից սկսած, երբ կազմավորվեցին առաջին ազգերն ու պետությունները, սկսվեց ժողովուրդների փոխադարձ շփումը և համագործակցությունը և միաժամանակ նաև նրանց հակադրությունն ու թշնամությունը, մի ժողովրդի, ավելի ճիշտ նրա շահագործողների ու պետության կողմից մյուս ժողովուրդների ենթարկումն ու շահագործումը, նվաճումն ու բնաջնջումը։ Հազարամյակներ տևեց այդ հակասական պրոցեսը, մինչև որ վերջին դարերում մարդկության ընդերքում ձևավորվեցին նրանց խաղաղ շփումն ու հաղորդակցությունը, համաշխարհային-համամարդկային տնտեսական ու մշակութային և, ի վերջո, նաև քաղաքական միասնությունն անխուսափելի դարձնող սոցիալական գործոններ և կազմավորվեց գոյություն ունեցող հակամարտության ու թշնամության, մարդու կողմից մարդու շահագործման պայմանները վերացնելու և ժողովուրդներին մեկ միասնական ընտանիքի մեջ միավորելու ռեալ սոցիալական ուժը՝ արդյունաբերական բանվորների դասակարգը, որն իր կյանքի պայմաններով ոչ միայն ազգային, այլև ինտերնացիոնալ-միջազգային ուժ է։ Սոցիալ-պատմական ստեղծված իրադրությունը, բանվոր դասակարգի տարերայնորեն սկսված ազատագրական պայքարը ծնեցին նաև այդ շարժման էության, ընթացքի գլխավոր ուղղության ու նպատակների գիտակցական իմաստավորման, տեսական ընդհանրացման անհրաժեշտություն, որն իրականացրին XIX դ. մեծագույն մտածողներ ու հեղափոխական գործիչներ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը։

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը, զինված ժամանակի գիտության ու փիլիսոփայության խոշորագույն նվաճումներով, ավելին՝ ստեղծելով արմատականորեն նոր սոցիալական փիլիսոփայություն՝ դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմը, ըմբռնեցին մարդկության զարգացման այդ դարաշրջանի

իրական միտումները և հանգեցին այն մեծագույն եզրակացությանը, որ հասարակական զարգացման հետագա ընթացքն անխուսափելիորեն հանգեցնելու է մասնավոր սեփականության, մարդու շահագործման և հակամարտ դասակարգերի վերացման, ամբողջ մարդկության սոցիալական միասնության հաստատման և, որ մարդկային հարաբերությունների սոցիալական բնույթի այդ արմատական վերափոխման ունակ և լիակատար շահագրգռված ուժը միջազգայնորեն միավորված, կազմակերպված ու գաղափարապես զինված բանվոր դասակարգն է։ Եվ նրա սոցիալական ազատագրության ամենակարևոր հետևանքներից մեկն էլ լինելու է ազգային հակամարտության ու թշնամության վերացումը, նրանց միջև բարեկամական, իսկապես մարդկային հարաբերությունների հաստատումը։ «Ազգային կղզիացումն ու ժողովուրդների հակադրությունները գնալով ավելի ու ավելի են անհետանում արդեն բուրժուազիայի զարգացման, առևտրի ազատության, համաշխարհային շուկայի, արդյունաբերական արտադրության միակերպության և դրան համապատասխանող կյանքի պայմանների զարգացման շնորհիվ,— նշում էին նրանք։— Պրոլետարիատի տիրապետությունը էլ ավելի կարագացնի դրանց անհետացումը։ Գոնե քաղաքակիրթ երկրների ջանքերի միացումը պրոլետարիատի ազատագրման առաջին պայմաններից մեկն է։

Ինչ չափով որ ոչնչացվելու է մի անհատի շահագործումը մյուսի կողմից, այն չափով էլ ոչնչացվելու է մի ազգի շահագործումը մյուսի կողմից։

Ազգերի ներսում եղած դասակարգերի հակամարտության հետ միասին կվերանա նաև թշնամական հարաբերությունները ազգերի միջև»[1]։

Մարդկության սոցիալական և ազգային վերափոխման կարևորագույն պայմաններից մեկը համարելով տարբեր ազգերի պատկանող բանվորների ինտերնացիոնալ համախմբումը և նրանց ջանքերի միավորումը, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսն առաջադրեցին «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» համաշխարհային-պատմական դեր խաղացած կոչը։ Իրենց երկերում համակողմանիորեն վերլուծելով կապիտալիզմի պայմաններում ազգերի զարգացման պատմական միտումները, ազգային ընդհանրության և ազգային հարաբերությունների բնույթը, բազմազան կողմերն ու կոնկրետ դրսևորումները, նրանք խորությամբ մշակեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքը՝ որպես ազգային հարցում բանվոր դասակարգի աշխարհայեցողության ու քաղաքականության հիմնական սկզբունք, որի հիմունքներով ստեղծեցին տարբեր ազգերի հեղափոխական բանվորների միավորումը՝ Առաջին ինտերնացիոնալը, որը վիթխարի դեր խաղաց բանվոր դասակարգի ուժերի միջազգային համախմբման գործում։ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը որոշակիորեն դրեցին բոլոր ճնշված ազգերի ազատագրման, ինքնորոշվելու հարցը և միաժամանակ նշեցին, որ ճնշող ազգի բանվորները պետք է ամեն կերպ նպաստեն և օգնեն ճնշված ազգերի ազատագրմանը, դրանով իսկ լիակատար դարձնելով իրենց իսկ ազատագրումը, քանի որ «չի կարող ազատ լինել մի ժողովուրդ, որը ճնշում է ուրիշ ժողովուրդներին»։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը գիտականորեն կանխատեսեցին, որ կապիտալիզմի զարգացման և պրոլետարիատի հեղափոխական-ազատագրական շարժման հետագա ծավալման հետ միասին լայն թափ կընդունի նաև գաղութակալված ու ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը, ազգերի տնտեսական ու մշակութային մերձեցման հետ միասին կուժեղանա աշխատավորների ինտերնացիոնալ համախմբումը։ Նկատելով կապիտալիզմի զարգացման նոր ստադիայի՝ իմպերիալիզմի, որոշ երևույթների հետ կապված համաշխարհային զարգացման փոփոխությունները, նրանք հանճարեղորեն կանխատեսեցին, որ պրոլետարական հեղափոխական ու ազգային-ազատագրական շարժման առաջատար կենտրոն կդառնա ցարական Ռուսաստանը,

---

1 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 1, էջ 161։

ուր մոտ հարյուր ազգեր ու ազգություններ միավորված էին մի ազգի պետության շրջանակներում, և որ դա վիթխարի ազդեցություն կունենա աշխարհի բոլոր ժողովուրդների ճակատագրի վրա։

Հիրավի, XIX դ. վերջերից Ռուսաստանը դարձավ պրոլետարական ազատագրական շարժման համաշխարհային կենտրոն, ուր կազմավորվեց կոմունիզմի սկզբունքներով զինված մարտական բանվորական կուսակցություն։ Այդ կուսակցության կազմակերպման գործը և մարքսիստական ինտերնացիոնալիստական գաղափարախոսությամբ նրա զինումն իրականացրեց Վ. Ի. Լենինը, որը ստեղծագործորեն զարգացրեց մարքսիզմի տեսությունը, հարստացրեց այն սոցիալ-տնտեսական և քաղաքական նոր երևույթների, մասնավորապես կապիտալիզմի իմպերիալիստական ստադիայի գիտական խոր վերլուծությամբ, հայտնաբերեց սոցիալիստական հեղափոխության նոր հնարավորություններ ու նոր մեթոդներ։ Վ. Ի. Լենինը մշակեց հասարակության սոցիալիստական վերափոխման գիտական ծրագիր, որի բաղկացուցիչ մասերից էր ազգային հարաբերությունների բնույթի արմատական վերափոխման ուղիների ու մեթոդների հարցը։ Արդեն իսկ ՌՍԴԲԿ I համագումարը (1898), հիմք ունենալով Վ. Ի. Լենինի մշակած ծրագրային փաստաթղթերը, հռչակեց ազգերի ինքնորոշման սկզբունքը, իսկ II համագումարը իր ընդունած ծրագրում մտցրեց ազգային հարցի լուծման Վ. Ի. Լենինի ձևակերպած հետևողական ու ամբողջական հայեցակետը, որպես ազգային հարցում կուսակցության նպատակ հռչակելով «Դասերի ոչնչացումը և բոլոր քաղաքացիների լիակատար իրավահավասարությունը՝ անկախ սեռից, կրոնից, ռասայից և ազգությունից», «բնակչության՝ մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքը, այն ապահովելով պետության և ինքնավարության մարմինների հաշվին անհրաժեշտ դպրոցների ստեղծումով. յուրաքանչյուր քաղաքացու իրավունքը արտահայտվելու մայրենի լեզվով. բոլոր հասարակական և տեղական հաստատություններում մտցնել մայրենի լեզու՝ պետականի հետ համահավասար կերպով», «պետության կազմի մեջ մտնող բոլոր ազգերի ինքնորոշման իրավունքը»։

1905 թ. բուրժուադեմոկրատական հեղափոխությունից հետո և հատկապես առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ու նրա ընթացքում արևմտաեվրոպական երկրների սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ղեկավարները կանգնեցին սոցիալ-շովինիզմի դիրքերի վրա, իսկ Ռուսաստանի մանրբուրժուական կիսասոցիալիստական կուսակցությունները սկսեցին պաշտպանել այսպես կոչված «կուլտուր-ազգային ավտոնոմիայի» սկզբունքը, որը ազգերի ինքնորոշման իրավունքը նենգափոխում էր, դրա փոխարեն ազգերին ինչ-որ ազգային-մշակութային ինքնավարություն տալով։ Վ. Ի. Լենինը վճռականորեն հակադրվեց այդ տեսությանը, որոշակիորեն ընդգծելով, որ «մեր ծրագրի պարագրաֆը (ազգերի ինքնորոշման մասին—Մ. Մ.) չի կարող մեկնաբանվել այլ կերպ, քան բաղաքական ինքնորոշման, այսինքն՝ անջատման և ինքնուրույն պետություն կազմելու իրավունքի իմաստով»[2]։ Միաժամանակ Վ. Ի. Լենինը ավելի հատու և հստակ ձևակերպեց ազգային հարցում կուսակցության ծրագրի հիմնական սկզբունքները, գրելով. «Ազգերի լիակատար իրավահավասարություն, ազգերի ինքնորոշման իրավունք. բոլոր ազգերի բանվորների միաձուլում,— ազգային այս ծրագիրն է ուսուցանում մարքսիզմը բանվորներին, ուսուցանում է ամբողջ աշխարհի փորձը և Ռուսաստանի փորձը»[3]։

Ազգային հարցի լուծման տեսական հիմքերի ավելի խորացման և նրա հետագա գործնական իրականացման ավելի կոնկրետ հանձնարարականներ մշակելու համար Վ. Ի. Լենինն այդ տարիներին համակողմանի հետազոտեց

---

2 Վ. Ի. Լենին, նույն, հ. 23, էջ 384։
3 Վ. Ի. Լենին, նույն, հ. 25, էջ 387։

ազգային հարցի պատմական զարգացման համաշխարհային միտումների հետագա զարգացումը, գաղափարախոսության մեջ ազգային հարաբերությունների բուրժուական և պրոլետարական ըմբռնման տարբերությունը, ազգային հպարտության և արժանապատվության ըմբռնման դասակարգային տարբերությունը և նշեց. «Բուրժուական նացիոնալիզմ և պրոլետարական ինտերնացիոնալիզմ՝ ահա երկու անհաշտ-թշնամական լոզունգներ, որոնք համապատասխանում են ամբողջ կապիտալիստական աշխարհի երկու մեծ դասակարգային լոզունգներին և արտահայտում են երկու քաղաքականություն (ավելին՝ երկու աշխարհայեցողություն) ազգային հարցում»[4]։ Վ. Ի. Լենինը խորապես ու հիմնովին վերլուծեց ազգային կյանքում ու ազգամիջյան հարաբերություններում էկոնոմիկայի, մշակույթի, լեզվի, հոգեբանության դերն ու դրանց յուրահատկությունները և առաջ քաշեց պատմական անհավասարաչափության ու դարավոր ճնշման հետևանքով տարբեր ազգերի ոչ միայն իրավական, այլև փաստական (տնտեսական, մշակութային, քաղաքական) անհավասարության հաղթահարման ուղիներն ու եղանակները պրոլետարիատի հաղթանակից հետո։ Նա հատուկ ուշադրություն նվիրեց ինքնորոշման իրավունքի իրականացմամբ անջատված ազգերի միավորման նոր սկզբունքի՝ կամավոր միավորման սկզբունքի հիմնավորմանը։ «Մենք ուզում ենք ազատ միացում,— նշում էր նա,— և այդ պատճառով մենք պարտավոր ենք ճանաչել անջատման ազատությունը (առանց անջատման ազատության՝ միավորումը չի կարող ազատ կոչվել)»[5]։ Դրա հետ միասին Վ. Ի. Լենինը շեշտում էր, որ ազգերի միավորումը, մասնավորապես նրանց դաշինքը խոշոր և հզոր սոցիալիստական ազգերի հետ, ամենևին էլ չի նշանակում ազգերի հավասարեցում և նույնացում, առավել ևս՝ նրանց վերացում։ «Քանի դեռ ժողովուրդների ու երկրների միջև գոյություն ունեն ազգային ու պետական տարբերություններ,— նշում էր Վ. Ի. Լենինը,— իսկ այդ տարբերությունները պրոլետարիատի դիկտատուրան նույնիսկ համաշխարհային մասշտաբով իրագործվելուց հետո էլ կպահպանվեն շատ ու շատ երկար ժամանակ,— բոլոր երկրների կոմունիստական բանվորական շարժման ինտերնացիոնալ տակտիկայի միասնությունը պահանջում է ոչ թե բազմազանության վերացում, ոչ թե ազգային տարբերությունների ոչնչացում (դա անմիտ ցնորք է ներկա մոմենտի համար), այլ կոմունիզմի հիմնական սկզբունքների (սովետական իշխանություն և պրոլետարիատի դիկտատուրա) այնպիսի կիրառում, որը մասնավորություններում ճիշտ ձևափոխեր այդ սկզբունքները, դրանք ճիշտ հարմարեցներ, կիրառեր ազգային ու ազգային պետական տարբերությունների նկատմամբ»[6]։

1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը տապալեց կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը, վերացրեց արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, հաստատեց աշխատավոր գյուղացիության հետ դաշնակցած բանվոր դասակարգի դիկտատուրա և դրանով իսկ ռեալ հիմքեր ստեղծեց նաև ազգային հակադրության ու անհավասարության վերացման և ազգերի կամավոր միավորման համար։ Եվ հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ սովետական կառավարությունը կատարեց մի շարք գործնական քայլեր. ճանաչեց Ֆինլանդիայի, Լեհաստանի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի անկախությունը, դեկրետ հրապարակեց Արևմտյան Հայաստանի ինքնորոշման մասին, 1918 թ. հունվարին ազդարարեց, որ «Ռուսաստանի սովետական հանրապետությունը հիմնվում է ազատ ազգերի ազատ միության հիմունքով, իբրև սովետական ազգային հանրապետությունների ֆեդե-

---

4 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 23, էջ 154։

5 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 34, էջ 478։

6 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 41, էջ 94--95։

ռոցիա»[7]։ Այդ սկզբունքին համապատասխան Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը ճանաչեց նաև Ուկրաինայի, Բելոռուսիայի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի, Միջին Ասիայի ժողովուրդների սովետական և ոչ սովետական պետական ինքնուրույնությունը, ինքնուրույնություն տրամադրեց Ռուսաստանի տարածքում ապրող ազգերին՝ թաթարներին, բաշկիրներին, բուրյաթներին, մոլդավներին, կոմիներին, կալմիկներին, Հյուսիսային Կովկասի և Դաղստանի ազգություններին, ղազախներին և Միջին Ասիայի մյուս ազգերին՝ Ռուսաստանյան Սովետական Հանրապետությունը հռչակելով ֆեդերատիվ հանրապետություն։

Կուսակցության X համագումարը, քննարկելով կուսակցության հերթական խնդիրներն ազգային հարցում, հատկապես ընդգծեց առանձին սովետական հանրապետությունների՝ պետական միություն կազմելու հրամայական անհրաժեշտությունը և նշեց, որ «Սովետական հանրապետությունների ռազմական ու տնտեսական գործի ընդհանրության վրա հիմնված ֆեդերացիան պետական միության այն ընդհանուր ձևն է, որ հնարավորություն է տալիս՝ ա) ապահովելու ինչպես առանձին հանրապետությունների, այնպես էլ ամբողջ ֆեդերացիայի ամբողջությունն ու տնտեսական զարգացումը. բ) ընդգրկելու զարգացման տարբեր աստիճանների վրա կանգնած զանազան ազգերի ու ժողովուրդների կենցաղի, կուլտուրայի ու տնտեսական վիճակի ամբողջ բազմազանությունը և դրա համեմատ կիրառելու ֆեդերացիայի այս կամ այն ձևը. գ) կարգավորելու իրենց բախտը այս կամ այն ձևով ֆեդերացիայի բախտի հետ կապած ազգերի ու ժողովուրդների խաղաղ համակեցությունն ու համագործակցությունը»[8]։

Այս բոլորի հետևանքով ռուս ժողովուրդը դարձավ համաշխարհային պատմության մեջ առաջին մեծ ժողովուրդը, որը կամովին հրաժարվեց շահագործողների դարավոր իշխանությամբ հաստատված իր արտոնություններից, քանդեց մյուս ժողովուրդներին բռնությամբ իր հետ կապող կապերը և վերածվեց ժողովուրդների ազատագրման ու նրանց եղբայրական համագործակցության հաստատման միջազգային գործոնի։

1922 թ., երբ սովետական կարգերը հաստատվել էին նախկին ցարական կայսրության համարյա ամբողջ տարածքում, Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ ստեղծվեց ազգերի մի նոր սոցիալիստական կամավոր միավորում՝ Անդրկովկասյան ֆեդերացիան, որը միավորեց հայ, վրացի և ադրբեջանցի ազգերի քաղաքական և տնտեսական ջանքերը։ Նկատի ունենալով, որ այդ պայաններում ֆեդերացիան ազգերի ինքնորոշման և կամավոր միավորման, ավելին՝ սոցիալիստական կարգերը պահպանելու, ամրապնդելու և զարգացնելու լավագույն միջոցն է, ինչպես և հաշվի առնելով վերը նշված փորձը, Վ. Ի. Լենինը հիմնավորեց և առաջադրեց սոցիալիզմի ուղու վրա կանգնած ժողովուրդների դաշնադրության նոր, ավելի կատարյալ ձևը՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, որը 1922 թ. դեկտեմբերին միավորեց չորս դաշնակից սովետական սոցիալիստական հանրապետությունների (ՌՍՖՍՀ, ՈՒՍՍՀ, ԲՍՍՀ, ԱՍՖՍՀ), որոնք պահպանելով իրենց պետական ինքնիշխանությունը ստեղծեցին նաև ընդհանուր-միութենական իշխանության գերագույն մարմիններ՝ ՍՍՀՄ Կենտգործկոմ, որը հետագայում փոխարինվեց ՍՍՀՄ Գերագույն սովետով, և միութենական կառավարություն։

Սովետների I համամիութենական համագումարը 1922 թ. ընդունեց ՍՍՀՄ կազմակերպման դեկլարացիան և հաստատեց միութենական դաշինքի Պայմանագիրը։ Այն նշեց անկախ սովետական հանրապետությունները միութենական պետական դաշինքով միավորելու անհրաժեշտության հիմնական շարժառիթները՝ ժողովրդական տնտեսության վերականգնում և սոցիալիզմի

---

7 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 35, էջ 259։

8 «ՍՄԿԿ-ն բանաձևերում...», մաս I, Երևան, 1954, էջ 711—712։

կառուցում, կապիտալիստական շրջապատման պայմաններում երկրի պաշտպանության ապահովում և սովետական իշխանության ինտերնացիոնալ բնույթը։ Այդ օրերին Վ. Ի. Լենինը հատկապես նշում էր, որ սոցիալիստական հանրապետությունների միությունը հարկավոր է մեր երկրի ժողովուրդներին, «ինչպես հարկավոր է համաշխարհային կոմունիստական պրոլետարիատին՝ բուրժուազիայի դեմ պայքարելու և նրա ինտրիգներից պաշտպանվելու համար»[9]։

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը, հիրավի, հանդիսացավ ազգերի ազատ ու կամավոր միավորման լենինյան սկզբունքի իրական մարմնավորումը։ «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ իրավամբ նշվում է, որ «ՍՍՀՄ կազմավորումը իր կազմով բազմազգ, գաղափարախոսությամբ ու քաղաքականությամբ, կազմակերպական կառուցվածքով, գործունեության սկզբունքներով խորապես ինտերնացիոնալիստական՝ բոլշևիկների լենինյան կուսակցության մեծագույն ծառայությունն է... ՍՍՀՄ Միության ստեղծումը Վլադիմիր Իլյիչ Լենինի գաղափարների, ազգային քաղաքականության լենինյան սկզբունքների կենդանի մարմնացումն է»[10]։

ՍՍՀՄ-ում իրականացված ազգային ինքնորոշման ամենաբազմազան ձևերը հնարավորություն ընձեռեցին կազմակերպելու զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող, իրենց թվաքանակով իրարից խիստ տարբեր ազգերի, ազգությունների և ազգագրական խմբերի ազգային-պետական միավորումներ, վերականգնելու մի շարք ազգերի դարեր առաջ կորցրած ինքնուրույն պետականությունը, ինչպես և վերջին դարերում կազմավորված մի շարք ազգություններին նրանց պատմության մեջ առաջին անգամ տալու ազգային պետականություն։

ՍՍՀՄ գոյության 60 տարիների ընթացքում ազգային ինքնորոշման ձևերն ու մակարդակներն ամրապնդվել ու կատարելագործվել են, ընդլայնելով ազգերի ինքնուրույնության, նրանց դաշինքի ու համերաշխության շրջանակները։ Անմիջականորեն միութենական դաշինքի մեջ մտնող ազգային հանրապետությունների թիվն այդ ժամանակաշրջանում աճել է ինչպես մի շարք ինքնավար հանրապետությունների՝ միութենականի վերածվելու (Ղազախստան, Ուզբեկստան, Տաջիկստան, Թուրքմենստան, Կիրգիզիա, Մոլդավիա), Անդրֆեդերացիայի միջոցով միութենական դաշինքի մեջ մտած հանրապետությունների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) անմիջականորեն միութենական հռչակվելու, այնպես էլ մի շարք երկրներում սոցիալիստական կարգեր հաստատվելու և կամավոր ՍՍՀՄ կազմի մեջ մտնելու ճանապարհով (Լատվիա, Լիտվա, Էստոնիա)։ Սկզբնապես չորս միութենական հանրապետության փոխարեն այժմ ՍՍՀՄ-ն են կազմում արդեն 15 միութենական հանրապետություններ, որոնց ներսում ազգային ինքնորոշման հիման վրա պետականության տարբեր ձևերով (ինքնավար հանրապետություն, ինքնավար մարզ, ազգային շրջան) համախմբված են ևս մոտ 40 ազգություններ, ազգային հատվածներ և ազգագրական խմբեր։

ՍՍՀՄ-ը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով սկսված նոր տիպի սոցիալ-քաղաքական հարաբերությունների, նոր սոցիալական կարգի անմիջական իրականացումն ու զարգացումն է։ ՍՍՀՄ շրջանակներում կյանք առավ ու զարգացավ արտադրության սոցիալիստական եղանակը իր նոր արտադրական ու հասարակական հարաբերություններով, նոր սոցիալական կառուցվածքով։ Լինելով աշխատավորների՝ բանվոր դասա-

---

9 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 36, էջ 704—705։

10 «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 60-րդ տարեդարձի մասին։ ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», Երևան, 1982, էջ 5։

կարգի, աշխատավոր գյուղացիության և մտավորականության պետություն, ՍՍՀՄ-ն այսօր բնութագրվում է երկրի ամբողջ բնակչության սոցիալական համասեռությամբ, հետևաբար և նրանց արմատական սոցիալ-տնտեսական ու քաղաքական շահերի միասնությամբ։

Սոցիալիստական արտադրական հարաբերությունների հաստատումն ու անընդհատ կատարելագործումը, տնտեսության պլանային վարումը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ իրականացվող բոլոր հանրապետությունների համաչափ արդյունաբերական ու ագրարային զարգացումը հանգեցրին ժամանակակից գիտության և տեխնիկայի նորագույն նվաճումներով ժողովրդական տնտեսության վերակառուցմանը, աշխատանքի արտադրողականության աննախընթաց աճին և ընդհանուր հասարակական արդյունքի՝ ազգային եկամտի շեշտակի բարձրացմանը։ Եթե 60 տարի առաջ ՍՍՀՄ-ի բաժինը համաշխարհային արդյունաբերական արտադրանքի սոսկ 1%-ը, այսինքն՝ մեկ հարյուրերորդ մասն էր կազմում, ապա այսօր այն կազմում է ամբողջ համաշխարհային արտադրանքի 20 %-ը, այսինքն՝ մեկ հինգերորդը։ Ընդ որում, ազգային հարաբերությունների տեսանկյունից ՍՍՀՄ-ում հանդես եկավ և ամրապնդվեց մի նոր միտում՝ ավելի զարգացած սոցիալիստական ազգերի, մասնավորապես ռուս սոցիալիստական ազգի անմիջական օգնությամբ նախկինում ետ մնացող ազգերի ու ազգությունների ավելի արագ զարգացման և առաջավորներին հասնելու միտում։

Տնտեսական զարգացման բնագավառում այդ միտումը դրսևորվեց նախկինում արդյունաբերապես և տեխնիկապես ետ մնացած հանրապետություններում արդյունաբերական հզոր համալիրների կառուցումով, միջին միութենական աճի համեմատությամբ առանձին հանրապետություններում արդյունաբերական արտադրանքի կրկնակի և նույնիսկ եռակի ավելի մեծ աճով, նրանց արդյունաբերության ժամանակակից կառուցվածքի (մեքենաշինություն, սարքաշինություն և այլն) ստեղծումով։

Սոցիալիստական կառուցվածքի բնագավառում այդ միտումը դրսևորվեց անցյալում ետ մնացած ազգությունների բանվոր դասակարգի ու մտավորականության ազգային ջոկատների ստեղծման ու ամրապնդման երևույթի մեջ։ Յուրաքանչյուր հանրապետությունում այսօր ստեղծվել են ժամանակակից որակյալ բանվորների տեղական կադրեր, ինժեներատեխնիկական, գիտական, գեղարվեստական մտավորականության, ուսուցիչների և բժիշկների խոշոր ջոկատներ, որոնք, հանդիսանալով ՍՍՀՄ միասնական բանվոր դասակարգի ու սոցիալիստական մտավորականության օրգանական մասերը, իրենց արժանավոր ավանդն են ներդնում և՛ ամբողջ Միության, և՛ առանձին հանրապետությունների տնտեսության, գիտության ու տեխնիկայի, կրթության ու առողջապահության զարգացման գործում։ Այդ միասնությունն ապահովել է այսօր ՍՍՀՄ առաջավոր դիրքերը համաշխարհային գիտության, տեխնիկայի և մշակույթի ասպարեզում։

Սոցիալական քաղաքականության բնագավառում ՍՍՀՄ ջանքերը նպատակամղված են բոլոր ազգերի ու ազգությունների համար կենսական այնպիսի հարցերի լուծմանը, ինչպիսիք են սոցիալիստական ապրելակերպի ստեղծումն ու հետագա զարգացումը, աշխատավորների բարեկեցության, կրթության և կուլտուրայի բարձրացումը, նրանց աշխատանքի և հանդստի պայմանների օրավուր բարելավումը, բնակարանային շինարարության զարգացումը, սոցիալական ապահովության համակարգի, բժշկական ու կենցաղային սպասարկման կատարելագործումը, շրջակա բնական միջավայրի պահպանումն ու բարելավումը։ Մասնավորապես վերջին հնգամյակներում, երբ ՍՍՀՄ-ը թևակոխել է զարգացած սոցիալիզմի դարաշրջան, իրականացվում է սովետական ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ամենալայն ծրագիր, որի շնորհիվ զգալիորեն բարձրանում են մեկ շնչին ընկնող ռեալ եկամուտները, մեծանում են ամբողջ ժողովրդի կրթության ու կուլտուրական, հոգևոր զարգացման հնարավորությունները։ Անշեղ քայլերով սոցիալիզմի ուղիով,

աշխարհում առաջին աշխատավորական պետությունը կարողացավ լուծել պատմական նշանակություն ունեցող այնպիսի խնդիր, ինչպիսին համաշխարհային կուլտուրայի ու քաղաքակրթության լավագույն նվաճումներին աշխատավոր մարդկանց բազմամիլիոնանոց զանգվածներին, յուրաքանչյուր սովետական մարդուն հաղորդակից դարձնելն է՝ անկախ նրա սոցիալական վիճակից ու ազգությունից։ Ինչպես իրավամբ նշված է ՍՄԿԿ Կենտկոմի վերոհիշյալ որոշման մեջ, այսօր «Հասուն սոցիալիզմի բարերար հողի վրա աճում և ամրապնդվում է սովետական ժողովրդի միասնական ինտերնացիոնալ կուլտուրան, որը ծառայում է բոլոր աշխատավորներին, արտահայտում նրանց ընդհանուր իդեալները։ Այն ներառնում է ազգային կուլտուրաների նվաճումների և ինքնատիպ ավանդույթների մեջ եղած ամբողջ համանշանակալին։ Բովանդակությամբ սոցիալիստական, իր ազգային ձևերով բազմազան, իր ոգով և բնույթով ինտերնացիոնալիստական կուլտուրան դարձել է Սովետական Միության ազգերի և ազգությունների գաղափարաբարոյական համախմբման մեծ ուժ»[11]։

ՍՍՀՄ-ում այլևս չկան հետամնաց ազգային ծայրամասեր. դրանք բոլորը սերտ համագործակցության և փոխադարձ անշահախնդիր օգնության շնորհիվ հասել են առաջավորների մակարդակին և ՍՍՀՄ-ն այսօր իսկապես հավասարների անխախտելի դաշինք է։

Մինչև սոցիալիզմը ժողովուրդների հարաբերությունները որոշվում էին նրանց տիրապետող դասակարգերի, այսինքն՝ ներքին ու արտաքին ճնշողների հարաբերություններով։ Այս կամ այն ժողովուրդը կարող էր պատմականորեն առաջադիմական դեր խաղալ այլ ժողովուրդների կյանքում, բայց նրա հարաբերությունն այլ ժողովուրդների հետ՝ իշխողների կամքով, կյանքում իշխող մրցակցությամբ կարող էր և լինում էր մեծապետական։ Միայն սոցիալիզմը, բոլոր ժողովուրդներին լիակատար հավասար դարձնելով տնտեսական, իրավական-քաղաքական, մշակութային-հոգևոր զարգացման բնագավառներում, նրանց միջև ծնեց ու ամրապնդեց ոչ միայն համագործակցություն ու փոխադարձ օգնություն, այլև իսկական անշահախնդիր եղբայրական բարեկամություն։ Եվ այդ բարեկամությունն ունի ոչ միայն տնտեսական, քաղաքական, գաղափարական, այլև իրավական ու հոգեբանական ամուր կռվաններ։ Իրավական հիմքը Միության միասնական օրենսդրությունն է՝ ՍՍՀՄ սահմանադրությունը (հիմնական օրենքը), որի մեջ ամրագրված են բոլոր ազգերի ու ազգությունների պատկանող մարդկանց հավասարությունն արտահայտող և նրանց յուրահատուկ ազգային յուրահատուկ շահերը պաշտպանող դրույթները։ Այսպես, ՍՍՀՄ 1977 թ. սահմանադրության մեջ որոշակիորեն նշված են. «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը համաժողովրդական սոցիալիստական պետություն է, որն արտահայտում է երկրի բանվորների, գյուղացիների և մտավորականության, բոլոր ազգերի և ազգությունների աշխատավորների կամքն ու շահերը» (հոդված 1), «ՍՍՀՄ տարբեր ռասաների և ազգությունների քաղաքացիները հավասար իրավունքներ ունեն։ Այդ իրավունքների իրականացումն ապահովվում է ՍՍՀՄ բոլոր ազգերի և ազգությունների համակողմանի զարգացման ու մերձեցման քաղաքականությամբ, քաղաքացիներին սովետական հայրենասիրությամբ և սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելով, մայրենի լեզվից և ՍՍՀՄ մյուս ժողովուրդների լեզուներից օգտվելու հնարավորությամբ։ Իրավունքների որևէ ուղղակի կամ անուղղակի սահմանափակում, ըստ ռասայական կամ ազգային հատկանիշների քաղաքացիների ուղղակի կամ անուղղակի առավելությունների սահմանում, ինչպես նաև ռասայական կամ ազգային բացառիկության, թշնամանքի կամ արհամարհանքի ամեն մի քարոզ պատժվում է օրենքով» (հոդված 36), «դպրոցում մայրենի լեզվով ուսուցման հնարավորու-

11 Նույն տեղում, էջ 13—14։

թյամբ» (հոդված 45), «ՍՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է հարգել մյուս քաղաքացիների ազգային արժանապատվությունը, ամրապնդել սովետական բազմազգ պետության ազգերի և ազգությունների բարեկամությունը» (հոդված 64)։ ՍՍՀՄ կազմավորման վաթսունամյակի մասին ՍՄԿԿ Կենտկոմի նշված որոշումը գնահատելով սահմանադրության դերն ազգային հարաբերությունների բնագավառում, նշում է. «Արտացոլելով ազգերի անշեղ մերձեցումը, ՍՍՀՄ Սահմանադրությունը ծառայում է բազմազգ պետության միութենական հիմունքների հետագա ամրապնդմանը, օրգանապես միացնում է սոցիալիստական ֆեդերալիզմը դեմոկրատական ցենտրալիզմի հետ։ Դրանում կուսակցությունը տեսնում է ինչպես տեղայնության և ազգային սահմանափակվածության դրսևորումների, այնպես էլ ազգերի և ազգությունների յուրահատուկ շահերի նկատմամբ արհամարհական վերաբերմունքի նկատմամբ կանգնեցված հուսալի պատնեշ»[12]։

ՍՍՀՄ վաթսունամյա վերընթաց զարգացման մեծագույն արդյունքներից մեկը սովետական ժողովրդի՝ որպես մարդկանց ընդհանրության պատմականորեն նոր ձևի կազմավորումն է։ Դա տարբեր ազգերի ու ազգությունների պատկանող մարդկանց սոցիալ-տնտեսական, քաղաքական-գաղափարական ու հոգևոր ընդհանրություն է, որը սոցիալապես համասեռ է, կազմված է միայն աշխատավոր դասակարգերից ու խավերից, չգիտե ներքին սոցիալական հակամարտություն և ինտերնացիոնալ համախմբում է, որի մեջ ներդաշնակորեն զուգորդվում են ազգային ու ինտերնացիոնալ շահերը։ Սովետական մարդուն հատուկ է ջերմ հայրենասիրությունը, ազգային արժանապատվությունը և միաժամանակ կենսարար սոցիալիստական ինտերնացիոնալիզմը, ՍՍՀՄ և սոցիալիստական համագործակցության բոլոր երկրների աշխատավորության հետ համերաշխության զգացմունքը։ Սովետական ժողովուրդը, միասնական լինելով, մի նոր ազգ չէ, այլ սոցիալիստական ազգերի ինտերնացիոնալ համախմբում, ամբողջ մարդկության արդարացի սոցիալական կազմակերպման նախատիպը։

ՍՍՀՄ-ում ազգային հարցի լուծման և ժողովուրդների փոխհարաբերությունների արմատապես նոր՝ սոցիալիստական տիպի փայլուն ապացույցներից է նրա կազմի մեջ մտնող Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը։ Հանրահայտ է, որ մեծ Հոկտեմբերի նախօրյակին հայ ժողովուրդը գտնվում էր օրհասական վիճակում. ուղղակիորեն դրված էր նրա ոչ միայն հավաքական գոյության, այլև լինելու թե չլինելու հարցը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը և սովետական իշխանության հաստատումը Հայաստանի մի հատվածում, Արևելյան Հայաստանում լուծեցին նրա ամենահիմնական-ճակատագրական հարցը՝ հայ ժողովրդի բուն գոյության պահպանման, նվաճումներից, ասպատակումներից ու բնաջնջումից նրա փրկության, խաղաղ ու ապահով գոյության, ազգային սոցիալիստական պետականության ստեղծման հարցը սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում։ Ավելին, ՍՍՀՄ կազմի մեջ մտնելով՝ Սովետական Հայաստանն ի վիճակի դարձավ լուծելու ոչ միայն տնտեսական, սոցիալական ու հոգևոր զարգացման, այլև անընդհատ բարգավաճման ու համաշխարհային քաղաքակրթության առաջին շարքերը բարձրանալու խնդիրը։

ՍՍՀՄ կազմում ամրապնդվեց ու հզորացավ հայ ժողովրդի ազգային սոցիալիստական պետականությունը։ Կրկնակի ու եռակի զրահավորված լինելով ՍՍՀՄ օրավուր աճող հավաքական հզորությամբ, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը կարողացավ երկիրը զերծ պահել ամեն տեսակի արտաքին թշնամիների միջամտությունից ու ներխուժումներից, ապահովեց հայ ժողովրդի խաղաղ ու ստեղծագործ աշխատանքը, նրա սոցիալ-տնտեսական, հոգևոր ու մշակութային վերածնունդը, նրա բարեկեցության անշեղ աճը և դրա հիման վրա ի վիճակի եղավ վերջին հազարամյակի

12 Նույն տեղում, էջ 15։

իր պատմության մեջ առաջին անգամ հայ ժողովրդի արտագաղթը իր երկրից փոխարինել հայրենիք ներգաղթով, ցրվող, տարագրվող ու բնաջնջվող ժողովրդից նրան վերածել հավաքվող ու կենտրոնացող, բուն աճող ժողովրդի։

Ըստ վիճակագրության աներկբա տվյալների, ՍՍՀՄ կազմավորումից հետո տեղի է ունենում հայ ժողովրդի կենտրոնացում և աճ ՍՍՀՄ-ում։ Այսպես, հայերի ընդհանուր թիվը ՍՍՀՄ-ում 1926 թ. եղած 1567,5 հազարից 1979 թ. հասել է 4151 հազարի, այսինքն՝ աճել է 265%-ով և, եթե 1926 թ.՝ ՍՍՀՄ-ում ապրում էր աշխարհի հայության մոտ կեսը, ապա 1979 թ.՝ արդեն երկու երրորդը։ Միաժամանակ ՍՍՀՄ-ում տեղի է ունեցել հայ բնակչության կենտրոնացում Սովետական Հայաստանում։ Այսպես, եթե 1926 թ. Սովետական Հայաստանում ապրում էր 743,6 հազար հայ՝ ՍՍՀՄ ամբողջ հայ բնակչության 47,4%-ը, ապա 1979 թ. Սովետական Հայաստանում ապրում էր արդեն 2725 հազար հայ, այսինքն՝ ՍՍՀՄ ամբողջ հայ բնակչության 65,7%-ը։ Սրանք պերճախոս փաստեր են։

ՍՍՀՄ կազմում արմատականորեն փոխվեց հայ ժողովրդի ամբողջ սոցիալ-տնտեսական կյանքը։ Ավերի ու թալանի, որբերի ու սովի երկրից Սովետական Հայաստանը վերածվել է ժամանակակից արդյունաբերության, մեքենայացված գյուղատնտեսության երկրի, մեքենաշինության ու սարքաշինության, էլեկտրոնիկայի ու կոմպյուտերաշինության երկրի, որ իր արտադրանքն է արտահանում աշխարհի ավելի քան 80 երկրներ։ Սովետական Հայաստանն այսօր ոչ միայն գլխովին գրագետ, այլև կրթության բարձր մակարդակ ունեցող ժողովուրդ ունի. 1979 թ. այստեղ 10 և ավելի բարձր տարիքի բնակչության 71,3%-ը, այսինքն՝ ամեն 1000 հոգուց 713-ն ուներ միջնակարգ և բարձրագույն կրթություն։ Ինչպես ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի հոգևոր կերպարի նկարագրի համար բնորոշ են դարձել սովետական մարդու հիանալի գծերը՝ նվիրվածությունը կոմունիզմի գործին, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի ու սովետական հայրենասիրության, ազգային բարձր արժանապատվության ներդաշնակ զուգորդումը. աշխատանքային ու հասարակական-քաղաքական բարձր ակտիվությունը, խաղաղասիրությունը, դասակարգային համերաշխությունը բոլոր երկրների ու ազգերի աշխատավորության հետ։

ՍՍՀՄ կազմում հայ ժողովրդի վաթսունամյա կյանքը հնարավորություն տվեց լուծելու այնպիսի համազգային խնդիրներ, ինչպես օտար ափերում սփռված հայրենակիցների հայրենադարձությունը, ժողովրդի կրթական, գիտական ու մշակութային օջախների կենտրոնացումը բուն հայրենիքում, մայրենի լեզվի, բովանդակությամբ սոցիալիստական ու ձևով ազգային մշակույթի աննախընթաց զարգացումը, իր հինավուրց ու նոր մշակութային արժեքների բարձրացումը համամիութենական և համաշխարհային ասպարեզ։ Հիրավի, հիանալի է ասել մեծ գրող Վ. Սարոյանը, որ «Սովետական Հայաստանը ՍՍՀՄ-ի համար լավագույն գործնական փաստարկներից մեկն է։ Ես գիտեմ, թե ինչպիսին է եղել Հայաստանը, ես այն իմ աչքերով տեսել եմ կես դար առաջ և տեսնում եմ այժմ»։ Նույն բանն ամենայն վստահությամբ այսօր կարելի է ասել ՍՍՀՄ կազմում գտնվող բոլոր հանրապետությունների ու ազգերի մասին։

ՍՄԿԿ XXVI համագումարում, հանրագումարի բերելով ՍՍՀՄ սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացումը վերջին հնգամյակում, Լ. Ի. Բրեժնևը նշեց, որ «Սովետական ազգերի միասնությունը այսօր ամուր է, քան երբևէ։ Դա, իհարկե, չի նշանակում, թե ազգային հարաբերությունների ոլորտում բոլոր հարցերն արդեն լուծված են։ Այնպիսի խոշոր բազմազգ պետության զարգացման դինամիկան, ինչպիսին մերն է, քիչ պրոբլեմներ չի ծնում, որոնք պահանջում են կուսակցության զգայուն վերաբերմունքը»[13]։

---

13 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 91։

ՍՄԿԿ XXVI համագումարում և նրանից հետո ՍՄԿԿ Կենտկոմի պլենումների որոշումներում ՍՍՀՄ սոցիալական, տնտեսական ու գաղափարական զարգացման մի շարք նոր պրոբլեմների հետ միասին առաջադրվել են նաև ազգային հարաբերությունների հետագա զարգացման այնպիսի կարևոր հարցեր, ինչպես հանրապետություններում բազմազգության աճի հաշվառումով կուսակցական և պետական մարմիններում բոլոր ազգերի պատշաճ ներկայացուցչության ապահովումը, ոչ արմատական ազգությունների քաղաքացիների լեզվի, մշակույթի, կրթության ու կենցաղի բնագավառում յուրահատուկ պահանջմունքների ավելի լիակատար հաշվառումն ու դրանց լուծման նոր ուղիների ու միջոցների կիրառումը, արմատական ազգությունների որակյալ բանվորների կադրերի պատրաստման ընդլայնումը և այլն։

Ղեկավարվելով մեծ Լենինի առաջադրած սկզբունքներով, Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը մեր երկիրը տանում է դեպի ավելի ու ավելի զարգացած սոցիալիզմ, դեպի բոլոր սոցիալական ու ազգային խմբերի ավելի սերտ համագործակցություն և ավելի ամուր բարեկամություն, դեպի ավելի ու ավելի կատարյալ մարդկային փոխհարաբերությունների ձևավորում։ ՍՍՀՄ-ն արտահայտում է մարդկային այդ բարձր սկզբունքները, սերտ համագործակցում է աշխարհի բոլոր առաջադիմական ուժերի հետ և հանդիսանում խաղաղության պատվարն ամբողջ աշխարհում։ Իսկապես, «ՍՍՀՄ-ի կազմավորումը և հաջող զարգացումը միջազգային անանց նշանակություն ունի, պատմական կարևոր բնագիծ է նշանավորում ժողովուրդների իրավահավասարության և բարեկամության, աշխարհի հեղափոխական նորացման համար առաջավոր մարդկության դարավոր պայքարում»[14]։

Սովետական ամբողջ բազմազգ ժողովուրդն այսօր իրավամբ հպարտանում է իր միացյալ ուժերով ձեռք բերված համաշխարհային-պատմական նվաճումներով, աշխարհում խաղաղության, ազատության ու ժողովուրդների հավասարության ապահովման գործում իր միասնական պետականության՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների մեծ Միության արմատական ավանդով։

---

[14] «ՍՍՀՄ կազմավորման 60-րդ տարեդարձի մասին։ ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը», էջ 19։